

ՀՈՒՍԱՆԻՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆԱՀԱՅՈՒՄՈՒԹՅԱՆ ԱՐՁ՝

Լ.Գ. Մարգարյան

Ճարքառի, բանահյուսության լեզվի բառապաշարային որոշ իրողություններ իմաստաբանական մի շարք առանձնահատկությունների վերհանման համար կարևորում հաճախական կիրառություն ունեցող փոխառյալ-մայրենի միավոր հավաքողությամբ հոմանշան գույգերի քննությունը, որոնց վերլուծությունը հնարավորություն կտա բացահայտելու հոմանշան փոխառյալ միավորի լեզվական արժեքը, պարզելու նրա նախընտրելիության աստիճանը մայրենի միավորի համեմատությամբ, ուրեմն և ներկայացնելու բանահյուսության լեզվում տվյալ բառաշերտի լեզվական արժեքը:

Դարձր շարունակ հարակից ապրելով, գտնվելով մերթ արարական, մերթ պարսկական, մերթ թուրք-թաթարական, մերթ լուսական, մերթ աղբյուրական տնտեսական-բաղադրանք ազդեցության տակ՝ բնականաբար, մեր բարբառն էլ (բանահյուսության լեզուն) իր բառապաշարում մեջ ներառել է այդ հարաբերություններն արտացոլող մեծաթիվ փոխառյալ բառեր, որոնք հավաքելի ու տարբերակելի ենք զրաբարյան շրջանի փոխառություններից, վերջիններն հոմանշանին ներկայացվող խմբերում հանդես են գալիս որպես հարազատ կամ մայրենի սիմվոլներ:

Արձեռյան լեզուններից կատարված փոխառությունները բավական մեծ թիվ են կազմում բանահյուսության բառապաշարում: Դրանց ներքոյը ենթադրվում է ոչ միայն մայրենի համարվելը չունենալու պայմանով, այլև լեզվի բառապաշարի հոմանշանին շարքը լրացնող, ու հարստացնող միավորների ներմուծմամբ:

Նման կարգի փոխառությունների հնարավորությունը պայմանավորվում ու բացատրվում է նրանով, որ փոխառյալ միավորի ծավալը ոչ միշտ է ներառում մայրենի լեզվում գործառնող միավորի տիրույթը և կամ ընդգրկվում նրա տիրույթում, այսինքն՝ դրանք իմաստային ընդգրկվածությամբ չեն նույնանում: Փոխառյալ միավորը մայրենի համապատասխան միավոր ազդեցությամբ կամ նոր գործածությամբ հոմանշանին որոշ նրբերանգներ է ձեռք բերում, ծավալվում իմաստային այս կամ այն հատկանիշով՝ երբեմն էլ գործածության հաճախականությամբ գերազանցելով մայրենի միավորին: Չի բացառվում նաև փոխառյալ միավորի մայրենիի հետ իմաստային լրիվ համընկնման փաստը:

Ըստ մայրենի և փոխառյալ միավորի իմաստային հարաբերակցության ու գործածական հաճախականության՝ կարելի է առանձնացնել հոմանշանին խմբերի իմաստային որոշ կարգեր:

ա) Մայրենի լեզվում գործառնող միավորն իմաստային ծավալով չի ընդգրկում փոխառյալ միավորը, վերջինս էլ նոր միջավայրում ձեռք է բերում նոր իմաստներ ու իմաստային նրբերանգներ ու գործածության հաճախականությամբ գերազանցում մայրենի միավորին՝ նախընտրվելով նրա համեմատությամբ:

Այսպես՝ *խաթր* կամ *խաթիր* եւ *հարզ* կամ *պատիվ* մայրենի լեզվում գործառնող *պատն* եզրով պահպանված է, եւ հոմանշանին այդ խմբից փոխառյալ միավորը նախընտրվում է եւ ունի հաճախական գործածություն: Բառակազմական հնարավորություններով էլ այն գերազանցում է մայրենի միավորին՝ *խաթիր անել*, *խաթիրը պահել* եւ այլն:

Օրինակ՝ *Տերտեր, տու նի մուտ, առչդ րու խնարքս կրպակի, մին տեղան փռնի, վրեններտ տուրուր կըտաս, վրեններիգըտ կըփռնիսր ձիւր տանք հաններւ:* [1]

Դադար-դինջ: Դինջ-ը անհամեմատ հաճախական գործածություն ունի: Մեծ են նաեւ քառակազմական հնարավորությունները՝ *դինջօթուն, դինջանայ, դինջումը* եւ այլն: *Դադար-ը* նվազ հաճախական է, գործածական է բաղադրյալ կազմությամբ՝ *թիրթիրիկ:*

Օրինակ՝ *Մին դժնում ըրագի տննում ա, վար ուրան քաշկերը դինջոթուն չըն տամ:* [2]

Թամբայն էլ տամ ա, րնալ ընգընը, վերդինչանն: [1]

Քափիգ՝ ըրած թիրթերում չի, յօխ տըկտըլեր ա անում: [3]

Նվեր (նիվեր) - *խայաթ* - *փեշքեշ-բադարկա*. Բառանդամ հոմանշային այս խմբից ուրաքանչյուր միեւնույն հասկացությունն արտահայտում է տարբեր նրբիմաստներով: *խայաթ-ը* ունի գործածության մեծ հաճախականություն առավելապես վաղ շրջանում գրառված բանախոսական նմուշներում: Մայրենի միավորը՝ *նվեր-ը*, գրեթե անգործածական է: *Փեշքեշ-ը* հաճախական գործածություն ունի, բայց այն իմաստային ծավալով չի համընկնում *խայաթ-ին*: *Փեշքեշ-ին* համարվել է *բախշայիշ անէլ-ին*: Նվազ հաճախական գործածություն ունի *պադարկա-ն*, որի հաճախականության կայունությունն նկատվում է վերջին շրջանում:

Օրինակ՝ *Հու հնչու օծը պատաց, եր կալավ, եկու թարավերեն նվեր պերավ, մինը՝ գյաբա, փեր՝ կումաշ, ծի, կոպ, վեխճար, վեցկե, մին խոսրավ, ամեն հինջ:* [4]

Շատ դաշանջլ ծուկներ ըն ինում, ուրանք էլ հայա սաղ, ասում ա, «Տըննական ըմ քարավերեն խայաթ տամ»: [5]:

Նույնանուն հեքիաթից՝ ուրիշ բանահավաքի փոխադրությամբ.

էս ծուկնան շատ օրուտ կկյա, տանիմ մեր թարուհուս բադարկա տամ: [6]

Կամ՝ *Օգերին թարավերը վերը էտ յսըմ ա, հրամայլըմ ա Օկի Փիրումին պիրին ուրան փշուր, վեր բադարկեր տա օզագայ ա լավօթուն անե, վե՛ յա փիսօթուն:*

Վերը մեր թարավերը քյեզ փեշքեշ տա, օգի մին պեն բախշի տու ասի «Թարավերը ապրած րենն, լրեն վե՛ մին պեն օզըմ չըմ»: [7]

Հոմանշային նման կարգի խմբեր են՝

Պատճառ (պաճճառ)-մահնա կամ *միանա, մանի*. Վերջինս միավորում է *պատճառ* եւ *առիք* ջատերի նրբիմաստները: *Պատճառ-ը* նվազ հաճախական է, իսկ *մահնա-ն* կամ *միանա-ն* կայուն ու հաճախական գործածություն ունի:

Օրինակ՝ *էս վրոթաբեղը ամեն դժնում մին միանա փռեւած քյաթա կըթնահուեց, թըրթերուկ թնած, խուրթինը լցած, մին էշու յրա քրցած քյինամ ա սիրածեն կոշտը:* [1]

էտ աղվերը քըննրյ արնես, քըննրյ, յամ էտ մըսեն պատաղը հունց ծանգըր քըցե, փըրը մանին ժըրես ա: [6]

Աչխոս (ափխուզ) - *մըղափուն*. դարձյալ մայրենի միավորը գործածության հաճախականությամբ գիշում է օտար միավորին, բայց և գործածական է:

Օրինակ՝ *Մըղափուն էս խոխա, վերը ումբուրը կարծ ա, էս խոխան ըպընդու չի, մըռնդու ա:*

կյամ ըն ախմախ թարավերեն կոշտը, հըսկըզնում, վեր մնիդը յոր ունելիս տեղեն քարավերութենն աղաթին ինրյը պիտի տըլա կյամ սաղ չամահաթեն ըռաչին ուրան քարոզը ասե, ծառ խոսե, թարիփ անե, ափսուզե, վեր իտի մարթըր մեռալ ա: [1]

Չերկարելով շարքը՝ բավարարվեք այդ կարգին պատկանող հոմանշային եւս մի քանի փոյցերի ներկայացմամբ:

Այսպես՝ ողջ-առողջ (փօխ-առօխ)՝ սաղ-սըլմաթ

հայրենիք-վանքան

բայց-ամմա

գանձ (կ'անձ)՝խազնա

թշնամի-դիշման

միջնորդ-սնքմը

գովք (կ'ովք)-թարիփ

վա-շրինդ

Հոմանշային վերոնշյալ խմբերի մայրենի միավորի ոչ հաճախական կիրառությունը պետք է շագատել նրա հետ իմաստային ընդհանրություն ունեցող փոխառյալ միավորի իմաստային լայն տիրույթով չբացատրելով ժամանակային գործոնը:

բ) Երկու միավորներն էլ կայուն գործածություն ունեն քանահյուսության լեզվում եւ գործածություններում ունենալով իմաստային ընդհանրություններ՝ նրանց միջեւ առկա է նաեւ նրբիմաստային տարբերակվածություն: Տվյալ դեպքում փոխառյալ միավորն արտահայտում է նույն հասկացությունը՝ իմաստային այլ երանգով:

Աղափսի հոմանշային խմբեր են՝

Աճ (մեծ) - զրո. երկուսն էլ հավասարապես գործածվում են: Դրանց միջեւ առկա է իմաստների նրբերանգային տարբերակվածություն: Զրո-ը ունի չափի մեծությունն ընդգծող սաստկական երանգ, անձի առմամբ գործածվելու դեպքում՝ նաեւ վիրավորական: Աճ-ը-ը նախ իմաստով:

Օրինակ՝ Հղենի բյիննայիս վարար թող ա կյամ՝ նդարաչին նի յա մննում մին օրաննանայա քարեն իրա նստում, մխրե կենում, տընսնում տոռնը այնց իյավ, մին զրեռ արք նի մտավ: [1]

Իմ հէր դիբլտ յլշլգ... հի ն: տլմնար, վար յավ իննար...մին մեծ օգ: [8]

Անկյուն (անգիւն) - պոճայ (սոր) - բուրջ - քունջ (սրսկ) - ուղղ (տուս) հնգադղամ այս խմբի բոլոր միավորներն էլ հավասարապես գործածվում են՝ բացառությամբ ուղղ-ի, որը համեմատաբար նվազ հաճախական է: Սրանցից յուրաքանչյուրն ունի նրբիմաստային առանձնահատկություն: Անգիւն-ը սովորաբար գործածվում է տան, շինության եւ այլնի կողմ ընդհանրական ու չեզոք իմաստով, բունչ-ի արտահայտած իմաստը մասնավոր է՝ ծաղրելու: Պոճայ-ը կամ պոճայ-ը հոմանշային սերտ աղերս ունի բունչ եւ անկյուն բաժների հետ եւ միավորում է նրանց իմաստային եզրերը: Ունի ավելի մասնավորված նրբիմաստ ինչ-որ մեկ անկյուն: Եթեմն էլ այն քինեյ՝ բառի հետ հանդես է գալիս բարդության մեջ՝ քինեյ-պոճառ արտահայտելով ամեն տեղ, ամենուր փոխաբերական իմաստը: Բուրջ-ը ավելի անորոշ ու նեղ իմաստ ունի՝ մի կողմ, մի տեղ, երբեմն նույնիսկ՝ ոչ անկյունում: Իմաստով մոտ է դրոշմ-ին: Բուրջ-ի հաճախականության ակտիվություն նկատելի է վերջին շրջանում:

Օրինակ՝ 1. Չորս ընգլունավը պնգիր հասար քաշած, մաշկուս ծառեր, ծղզնե, ախալոր: [9]

2. Ըտրանց մինը հենգլ պնոնած Լշերն ա քջըմ, Լն չորս հորին էլ Լտ խըմբային կրդպնտն յրա պարանց քջած կրդպնտն քունջերբան փորնըմ, խըմբային լեր օնըմ տանըմ: [1]

3. Լտ երկու ըխճրկանը կոչտը ընդրանց էլ յոր օնըմ, ընդրանց ստոլին գառ ըսկյունին էլ քո օնում՝ ուրանց վրնակն դավապալը, ընգնըմ քունջրպուճալս, յոխ հրվարքը, կյամ Լտ վրերին մրջի: [7]

4. Սա դե ծնորավը հինչ ար կյամ, վրեր հինչ անե, պնմբակը տանը մին բուրջումը վր ա ածում, թողում ինդի, նի յեյ չի կյամ: [10]

5. Լս ուղղան Լն ուզուլըն ա բինըմ, Լն ուզույան Լս ուզուլը, հանց ա պննակալը կուրգըրած հավ ինի: [3]

Ահն կերպ - մին թահրավ - գոռավ. հոմանշային այս խմբի II եւ III եզրերն այլնու գիտակցվում որպես փոխառյալ միավորներ, այլ փոխառյալ ու հայերեն բառերով բաղադրված կազմություններ՝ բարբառային միավորներ, որոնք գործածության հաճախականության գերազանցում են մայրենի միավորին: Իմաստային առումով նրանք համարվել են: Այդ երեւում է նույնիսկ միեւնույն նախադասության մեջ:

Օրինակ՝ Ծննին մարթ կնեզ, խոխա-ըրախա քջտըրներեն պըսղըլըմ՝ ըն, հաւացուն ծամը, ժըխնըրըմ տինըմ, վրեր մին կյերպ կոլ ըն տամ, ծղըր տալիս չորը թռչըմ ըն, պիրըններըմ միգրու, վրեր մին թանիրավ կաթ-կաթ կոլ ըն տամ, վրեր սովածությունան կըտորվին վն: [1]

Ընդը, շատ ըսելան, կտն ընելան, հրակրչնելան ետը մին թանիրավ ըտրանց անա մինը գոռավ-կիմավ խոսկերթը կըսըտ-կնսառո թա ասըմ ա. «Դ-ն-վ-ը-ն-ը 2-ա-տ 2-ը օգըմ ինձ տ-ա-թ-երը»: [1]

Նույն կարգի հոմանշային գույգ են՝ մին պնդան-մին բայմա (քայմա՝ խոսք), վերջինս գործածության շրջանակներն ավելի լայն են՝ արայմանավորված նոր միջավայրում ձեռք բերած բազմիմաստությամբ. ունի նաեւ մի քիչ իմաստը:

Օրինակ՝ Տղըրներան էլ տըմբըհան չըն ինի վրե, ըլկըրնեն պեզ կանին, վրե՝ մին քյամն կըխոսին: [1]

Ահն բլավմա ըսպաստ յաղ ըս անում յըրա տամ: [3]

Մեծամեծեր (մեծամեծ՝ ձեր) - ախսասխակայն, իմաստային առումով համարվել են. Փոխառյալ միավորն ունի նրբերանգային տարբերակվածություն. այն ավելի մասնավոր է. Եւ նրանակում է ոչ թե մեծ, տարեց ընդհանրապես, այլ հասարակական հարգանքն ու սերը վայելող, հորհրդատու, իմաստուտ, Նոր սերնդի խոսվածքում այն հազվադեպ է գործածվում:

Օրինակ՝ Ըննին ախսասխակայնն մի օր հպարտած մտածո՞րն. վերը ակնը ուրանց շենին պատիվ չի պնդեմ ամեն մի դարիք մարդ լյակալ շենը, տընտնո՞ւ ա սրբանց ըրարսունքը, ուրան էլ անմոտ ա կլամ: [7]

Հրկարվո՞ւմ ըն էտ երգչորին ախսասխակայնն, փորցված, գլիդացող, աշխարք տընտած արթիք, մին-մին կլամ էտ թարգվերեն կոշտը, վերը հրկըցնին, քիմազլ ինին ուրան, կարն երգիքը կատավարե: [1]

զ) Հոմանշային խմբերի եզրերի միջեւ իմաստային տարբերակվածություն գոյություն չունի. եւ փոխառյալ միավորի ավտիվ գործածությունը պայմանավորված չէ իմաստային ավելի լայն լրացվածով: Տվյալ դեպքում փոխառյալ միավորի հաճախական գործածության փաստը կարելի է բացատրել միայն ժամանակային գործոնով. եին սերնդի խոսվածքում, որն անմիջական եզր էր փոխառյալ լեզվի, դրանք անհամեմատ հաճախական էին, քան այժմ եւ:

Այդ խմբից էլ երկու կարգ կարելի է առանձնացնել.

1. Հոմանշային խմբեր, որոնց փոխառյալ եզր-միավորը գործառական հաճախականությամբ համարվածքվում է մարդենի միավորին՝ ինչ-որ տեղ էլ գերազանցելով:

Այսպես՝ Մարութ - թմնու՞մ:

Օրինակ՝ 1. Թմնու՞մ կործող պողոտանդի նման ա: [6]

2. Ըստերդ տղան մարութ շորերն ա կլմնում, ծին նըստում: [1]

Խոված-տուզեր:

Օրինակ՝ 1. Հոգին նորայր խի սուվրմանում ա:

2. Ա տնաքանդ, խոխերը տնգնը կտորվեցեն մարդս, ախր ինսանուն օինս ըս, եր վաց մին պնտու կաց, խոխոցըս հետն թուզի ճարե: } || |

Ճար-թափը-յոն-իլաց. վերջինս չունի հաճախական գործածություն:

1. Վիչ ճար օն, վիչ իլաց: [3]

2. Հավեն պնտուկային սուվեր շունը թափը չի ինիլ: [5]

3. Այսր էտ խընդ շինանցը տնանան վերը էլ ճար չըկա, էշերը պնտած ա, յա բիդի թողին ծրակընը, յա բիդի մին թափում տանին: [1]

4. Ա բըղատար ինծ նընտ ըստի-ըստի պեն ա պրտահալ, էս հինչ տնող մին խընծո ըմ րթալ, կերալ, ետհետ պարզվալ ա, վեր ծերն ա էտ խնծորը, դանչանք ըմ անըմ, յա յոն կա, էտ խնծորը ինծ հալալ ըրա, յա չէ, րոնս տննական չի: [4]

Ասպին (առաջին) - սուվթա, պատուտ - թիքա

Օրինակ՝ Սուվթա պատուտ անուշ կինի:

Ասպին թիքան թաղծր կինի: [5]

Կլամաց-կամաց - յավաշ-յավաշ

Օրինակ՝ Վըրթաբեղն էլ էտ ա օգում, յավաշ-յավաշ տութ ա տամ դիպալ սիրածեն տնդերը: [1]

Յրվը-յավաշ շոտ ա կամ,

Մին շլակ փոշ մաշկեն: [12]

Ինքն էլ կըմնց-կամանց բ՛նենում ա, տըռանը ծակալի յնշում: [3]

Վերթ-նօթաթ-օշերեղ. մարդենի միավորին հավասարաբեր գործածվում է փոխառյալ եզր. նվագ հաճախականություն ունի Երրորդ եզրը, որի գործառական ակտիվությունը գզայի է վերջին շրջանում:

Օրինակ՝ 1. Վերթը հըսնում ա Դերունց Ըղբլիկն: [3]

2. Ասլան-Ֆալասին, մին էլ էս իրեր մարթս շատ-խընց յոնգալ ըն մին տնղ մին տոն շինալ հու էս չորս հուլյին ընդդը կազալ հու նոթաթ-նոթաթան մինը տանը կննում ա իյալ... [1]

3. Մութա ուրուզյունը մընծ տղեն օշերդն ա ինում: [10]

Ուժ (օժ)-ղվաթ:

Օրինակ՝ *Թարափների տղան տենակը ցուրան հանքն ա, ռւրան բուղան կտորքն թափոն դուշին ուտըցնքն, ըտրանափ նա դվաթ ա առնում:*

Բօրփն տղղավը լկված ինձ նըրքտ օժ ա փօրգըւ: [3]

2. Հոմանշային խմբեր, որոնց փոխառյալ եզրերը աստիճանաբար արտամղվել և արտամղվում են բարբառից ու քանակուսույթյան . վերջին շրջանում դրանց գործածությունը զգալիորեն նվազել է :

Այդպիսիք են՝ *բեր (շրպերք)* - տխաուզ (սօնքսըզ)-սըբ:

Էտ թարափներ տխաուզ ա ինձն՝ տղա չի ինձն, ախճիզ չի ինձն: [13]

Կամ՝ Տահանք տոկտուզ ըն ինիս, միշտ էլ դիվտք: [10]

3-րդ եզրը իմաստային ու գործառական տարբերակվածություն ունի. անպատու անասունների վերաբերմամբ է գործածվում:

Օրինակ՝ *Էս ա քանձ տաքլ յա ծընում չի, սըբ. յա տո՛ւլս յկկալ, տանում ում քազար ծախիմ:* [3]

Ներկայությամբ - դաշարում:

Վե՛յ մին պեն չօնիմ քնզ մին զդարշ խնձոր տամ, իմ դաշարումս եր կալ կեր: [13]

Արդուգարդ-գինյաթ.

Օրինակ՝ *Ուրան գինյաթը կնքմհը լըլլեխում կապում ա, տինում մին քօրու տակն, շորերը հանում նի մըտնում կենտ:* [13]

Ազոտ (օրոթ)-թնք. 1. Բյար չի ըրալ, հու էն մարթը տես ու տեն մտնզլ ա ըրալ ասալ: [1]

Լէխարք-Օլթ ա դունյա.

Օրինակ՝ *Պրավալ ըմ ծհըր չիկա,*

Արաններում ախարըր չիկա,

Կըմտնիմ դարիք Օլթիմ,

Բըշտիս մնըր նան քհըր չիկա: [6]

Ալընխարին մընք խաշինըյ

Լյինի-արադափ փարշինըյ

Էն դունյումը կործ չօնինըյ

Էս դունյումը զյանք քաշինըյ: [6]

Ժողովուրդ - խալխ

Օրինակ՝ *Արտ ըմ փարալ կյարի յա,*

Լյաղթական տարի յա,

Նամուս-դենյրաթափ խալխ ընք,

Էլիս ախպներս փարի յա: [6]

Նալխ-ը գործածվում է նաև ուրիշ, ուրիշները մասնավորված իմաստով:

Խալխը հուփ ա գ'ուգ'ու՛մ հինչէք ըն կ'էնում, տու հի նչ ըս ըրալ էտ: [3]

Խիղճ (խը'ղճ) - ինս'ափ

Օրինակ՝ *Կըծէ, օխձ ախպեր, կըծեն սաքնքը Էն ա վեր էրկու վրնանուն լիվոթուն ընելի չի, տեղավը մին ըտրանք անինսափ ըն. խնդճ, մնել չօնին:* [1]

Ջրույց (գրոճ) - գիլիջ'ա

Օրինակ՝ *Ամին տարի գրոունքիս յա ըրունքիս շինըմաշումը համիշա էտ Ուզուն-Թըյըն գիլիջան ըն անում:* [11]

Դավազան (կրվազան) - յօմախ. Մարթը մին փնտ, չումաղ ըն եր կալալ, ամմա մինն էլ մին լիճ ա եր կալալ: [1]

դ) Բանահյուսության բառապաշարում կան փոխառյալ միավորներ, որոնք չունեն իրենց մայրենի համարժեքը: Հոմանշային խմբում ընտրվող մայրենի միավորը չի ընդգրկվում փոխառյալ միավորի իմաստային տիրույթում:

Այսպես՝ *Մըսրիհաթ*. եթե հոմանշային մյուս եզրն ընտրենք *գրույց-ը*, այն չի ընդգրկվում *մըսրիհաթ-ի* արտահայտած իմաստը: *Մըսրիհաթ-ը* գրույց է, բայց *գրույց-ը* *մըսրիհաթ* չէ: *Խօրոք*

անել, խորտոյն նըստոյ հարադրութիւնները իմաստային ծավալով ավելի են մեծանում, քայց չեն օրոշանում:

Օրինակ՝ 1. Մաղ ժողովորդը հրկաքված. Լս տըղան թարգմերն յոխ պատմըմ ա, վերը թոր
որտանն տես կաղարայ չըմ, իմ հաթ պահալ ըմ, մրտաճալ, վերը փորգված մարթա ա. մին պեն
պըստահն, կըրյինամ մըսլըհաթ հըրցընիմ, մըհենգլ հունց վերը տնսնենր. փորգանքը պըստահալ
ա, մո էլ ընցալ ըմ իմ հոր կոշտը մըսլըհաթու, սաղ շրհարը քզաղալ ա: [1]

2. Կլամ ըն մըսլըհաթ անըմ, տանըմ սրանց շենան մին դըրաղ տան վերը քցըմ, ուրանը Լլ
իմ մին թաներալ, նութայթալ ըտրանց ուտուցնըմ, խմըցնում: [1]

3. Վերդապեն մարթը և կենգը մասլահաթ ըն կլալիս ու խոխան տամ թաջիրին: [10]
Նիգլարան.

Յըն նիգլարան կմեռնիմ, վեր գլիդամ վե՛, թա Լո խոխան հի ն՛, անգա ա տընսալ, վեր
ուտան Լտրան ստիրիս ա, ինքն էլ ըսեն չի: [7]

Կլամ Լ՛ն ըմ նիգլարան, մին խաբար կանիս, տըլսնամ տա կործըրը հինչ տը՛ռալ: [3]
Գընգըլըստա.

Հունց կըպըտահն, ըտրանց տոնը նի կըկենա, ըսլըսն Լրիլը, ըտրանց անա մինը կրակը վերը
տնսնըմ ա, գոտալ-կլիժալ, շատ գընգըլըխտա պիրանեն մին դոլալ ծեն կըտա: [1]

Ե) Հոմանշային խմբեր, որոնց եզրերը տարբեր լեզուներից փոխառություններ են: Մայրենի
ամարմեր միավորը գործածական չէ:

Ինչպես՝ *Շյապկա - փառիաղ.*

Օրինակ՝ Ողիս թանգըլ թոզ ա,

Սիրածըս ալազյոզ ա,

Շղատպիստ կըլխատ եր կալ.

Թափ տամ քյանդիլըտ թոզ ա: [6]

Մարթն ասում ա.

Ա՛ - փառիաղ կլխաս պենցիր տեղ օնիմ, վեր քեզ տնիմ յրա, քեզ ամենալալ տեղն ըմ
թալ, խե՛ վեր ըս ըղնում: [9]

Ըագար - յարմուրկա.

Օրինակ՝ Սին օր մընծ տղան հորըն ասըմ ա.

Ա՛ հաթ, թող յըն ըլինիմ յարմուրկա տընսնամ հին՝ կա, հինչ չի կա: [7]

Իրի՛ր ըմնի՛կան խօխա՛

Բը՛ցըրազար: [12]

Տիւրմա - դուսաղխանա.

Օրինակ՝ Լտ գլաղան մըհենգլ Լն ա դուսաղխանըմ, ընդրան թողըմ ըմ ծըրը դադաստանին,
նչ պատիժ ասիթ, ինդի յըմ աննը տալո: [7]

Շատ փիս մարթա ա. տրա տընդը տո՛ւրման ա: [10]

Խորագիր բանահյուսական նմուշներում գործածվում է նաև բանտ մայրենի
ամարմերը:

Օրինակ՝ Լն պալատը ինձեռն բանտ ա, ինձ Լս բանտան ազատ ըրա: [9]

Կլամ՝ Տալարը անտեր հանդումն ա,

Մալդաթը մոտե՛ բանդումն ա

Բիշերը թոմնս հունց տանե՛

Ախպերս Շուշվա բանտումն ա: [14]

Այդ կարգի հոմանշային խմբեր են՝

Աշպազ - պօվոր. ժամանակի ընթացքում թուերենն ավելի է արմատավորվել:

Օրինակ՝ Եննան յոխ սրտաները եկալ ըն օղխտ ծեռքեն տիրալ Լն պատառ ճղած տեղը,
նակաշպազն ա մնագալ: [1]

Իտի մին քանկ ինջիներնլի, չախիլ-ջըռոյնլի կըն՝Լլան յետը, Մառա քաջին
վրին կան՝ում ա: [3]

Մաղաթա յեշէ՛մը.

Օրինակ՝ Սարգսյանը հրվարում ըն,
 Իմ սրերտըս կըրակըմ ըն,
 Ես հի ն, անիմ սին-մինակ,
 Շուշվա մընձ քաղապրմը: [6]

Ընգանք կէտն Էն անգյունը, տեհալ հին, ... անա, մին լէշկար կա ըստեդ, փք
 Իրկսավը ընգընելի թահիր չկա: [8]

Չէշմակ-աշկինոր սերնդի խոսվածքում առաջինը գրեթե չի գործածվում:
 Օրինակ՝ Միկա կմկմամ ա և և անում, չէշմակը դուզքնում, էշում ճիլի-ճելլի բոլ
 շամը փռնած դերիզըն, լիրա կզնվում, թա՛շամը մոտե պահն, կիլիր ըրվամ չի [4]

Առանց աշկի աշկըս պլն չի նըհաշ տամ, հանց ա թուխալըկաված: [3]

Ա փփարիմ - մայադեց

Յ ըղօլի - վիկա

փր՝ նթամնթ - բընժվա

թամթալ - լօղըր

մարօզ - այազ

Այսպիսով, հոմանշային խմբերի քննությունից երևում է, որ փոխառյալ միավորներն իրենց իմաստային-կիրառական առանձնահատկություններով ընդգրկել են գործածության լայն շրջանակներ: Բայց և այնպես, պատմական դիտանկյունով րննելով՝ ակնհեր է, որ բառիմաստային այդ խմբերը միտում չունեն լեզվական համակարգում կայունանալու որպես հոմանշային մանրահամակարգեր: Բարբառի և բանահյուսության բառապաշարի բառակազմական համակարգի զարգացման ու կատարելագործման գործընթացում գերակայողը գրականացման միտումն է, որն արտահղելով օտարաբանությունները այն փոխարինում է մայրենի գրականով: Դա պատմականորեն արդարացված լեզվապաշտպանության օրենքն է, նրա զարգացման տրամաբանությունը:

Դրականություն

1. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ VI, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Նրևան, 1973:
2. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ 15, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Նրևան, 1983:
3. Մարգարյան Ար., Արցախյան ավանդույթներ (ծնագիր):
4. Ղախրամանյան Ռ., Բան ասնմ լսիր, Սոնա հրատ., Ստեփանակերտ, 2002:
5. Նմուշներ Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունից, Հայաստան հրատ., Նրևան, 1978:
6. Գրիգորյան Մ., Լեռնային Ղարաբաղի բանահյուսություն, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Նրևան, 1971:
7. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ V, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Նրևան, 1966:
8. Դավթյան Լ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզ, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Նրևան, 1966:
9. Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, Նրկորդ գիրք, Ստեփանակերտ, 2004:
10. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ VII, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Նրևան, 1979:
11. Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Իսրայելյան Ս., FF II, Լմաս, 8815,01-8816,00:
12. Մարգարյան Ար., Արցախյան հանելուկներ, Ստեփանակերտ, Դիզակ պլյուս հրատ., 2002:
13. Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Ղազիյան Բ., FF V, 6769,01-6960,00:
14. Հայրապետյան Ռ., Ղարաբաղյան լսադիկներ, Ստեփանակերտ, 2000:

«Մեքոպ Մաշտոց» համալսարանի հայոց լեզվի,
 գրականության և լրագրության ամբիոն